

ԲԱԺԱՆՈ՞՞ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուշկարիոյ համար
 Տարեկան 12 ծր.
 Վեցամսեայ 6 »
 Արասահմանի հա-
 մար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 3 ծր.
 Վեցամսեայ 1.50 »
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Պատկերակ սոյո ստալին
 երեսին համար 40 սակոխի
 հ. իսկ վերջին երեսի հա-
 մար 20 սակոխի հ. երեքեկ
 սեկ սակոխներու համար
 20 Օլո գեղը կըլլայ:

Պուշկարիոյ համար ձեռքի
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Նամակ եւ դրամ դրկել
 Խմբագրութեան հասցին

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjourn»
 Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չնկ տրուիր

Արասահմանի համար ձեռքի
)(20 ՍԱՆԹԻՄ)(

ՇՆԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵԲՇՆԱԲԹԻ ԵՒ ՇՆԱԲԱԹ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Յառաջիկայ չորեքշաբթի նար-
 ժում չի պիտի հրատարակուի
 հայոց և պուլկարաց Աստուա-
 ծածնայ տօնին առթիւ:

ԴԵՌ ԶԱՐՈՒՆԱԿԵՆՔ

Չեմ յուսար որ այս օրերուս
 մէջ՝ հայերուս միտքն ու սիրտը
 զբաղեցնող աւելի կ'սրբուր, ա-
 ւելի կ'ենասական հարց մը գտնուի,
 քան ան տագնապալի երեւոյթը,
 որ այսօր սեւ ուրուականի մը
 պէս կը սպառնայ հայութեան
 գլխուն, թրքական դժոխք երկ-
 րին մէջ:

Չեմ կարծեր որ երբ կրկին ու
 կրկին անգամ կը վերագառնամ
 այդ վերանորոգում սարսափնե-
 րուն շուրջը, միօրինակութեան
 մը մեղքը գործած ըլլամ:

Հայաստանի մէջ կեանքը իս-
 կապէս անտանելի է, հայերը հոն
 երբեք ապահովութիւնը չունին
 ոչ իրենց պատուին, ոչ գոյքին
 և ոչ կեանքին. միշտ սահուողի
 մէջ են անոնք՝ թէ կրնայ վազը
 ընդհանուր նոր շարք մը արիւնի
 մէջ խեղդել զիրենք:

Թուրք կատաղարութիւնը, որ-
 չափ ալ անմեղ գառնուկի հովեր
 առած Պատրիարք ու Վարչու-
 թիւն խաբէ, մազի չափ չէ շե-
 դած իր հայաշինչ ծրագրէն.
 Բան մը որ հազար անգամ կրկ-
 նուած է:

Աս բարբարոս կառավարու-
 թիւնը լաւ բռնած է իր ճամ-
 բան. ուր որ խիտ և քիչ ու շատ
 ոյժ կազմող հայութիւն կը տեսնէ,
 գիշախանձ ագռաւի պէս հոն կը
 վազէ, կը խառնէ ու կը խառ-
 նըջտէ, մինչեւ որ հայերուն մէ-
 ջէն կը գայնուին մարդիկ, որ ա-
 ւելի լաւ սեպելով մեռնել քան
 թէ ամէն անպատուութեան տու-
 կալ, գէնքի կամ գիմարութեան
 կը գիմեն. և թուրքը հասած իր
 նպատակին՝ կոտորածի հրամանը
 կարձակէ:

Վկայ ըսածներուս, սա վերջին
 օրերուս մէջ կատարած Սասունի
 նոր եղբերգութիւնը, որուն

պատճառը թուրքին դատումովը,
 քանի մը յեղափոխականներ են
 եղեր:

Չարմանալի պիտի ըլլար և
 հայութեան մէջ ալ պատուոյ, ինք-
 նապաշտպանութեան բնազդում
 մեռած պիտի սեպէինք, եթէ
 այդ անտանելի հալածանքներուն
 մէջ՝ ըմբոստ, ընդվզող շարժում
 մը, յեղափոխական, ապստամ-
 բական երեւոյթ մը չը տես-
 նուէր:

Մենք արտասահմանի հայերս,
 ամէն տեսակ ճնշումէ, հալա-
 ծանքէ ազատ ուզածնուս չափ կը
 գրենք ու կը խօսինք մի ինչ որ
 խոհեմ, զգուշաւոր ու լռիկ գոր-
 ծունէութեան վրայ. և կը մու-
 նանք սակայն, որ իրական, շար-
 շարանքներով լեցուն կեանքին
 մէջ, ատոնք գոյութիւն չեն կըր-
 նար ունենալ և կը նշանակեն
 միայն համբերութեամբ, համա-
 կերպութեամբ սողալ, ու սպա-
 ռիլ առանց բողոքի, առանց գան-
 զատի:

Թուրք կառավարութիւնը երբ
 փոխանակ յեղափոխականներ
 փնտռելու և պատժելու, այդ
 պատրուակով ուղղակի ժողովուր-
 դը կոտորել կուտայ, իրեն բուն
 նպատակ ունի հայութեան մէջ
 պառակտում սերմանել, գանձք
 զբաղեցնել, և ժողովուրդին ու-
 ժերը ներսէն սպառել:

Ու այդ մոնկոլական նենգոտ
 քաղաքականութիւն հասած է իր
 նպատակին: Մինչեւ հիմա եղած
 ջարդերը անթիւ պառակտում-
 ներ առաջ բերած են մեր գոր-
 ծող ուժերուն և ժողովուրդին
 մէջ, և տարիներէ ի վեր փոխա-
 նակ բուն գահճապետը գատա-
 պարտելու իրարու միս կուտենք:

Ու գեռ կը շարունակենք մեր
 այս ընկերասպան կռիւր: Ամե-
 րիկայէն եկած թերթի մէջ աչ-
 քիս կը զարնեն քանի մը տո-
 ղեր, որ քաղաքական աշխարհի
 մթութենէն ահաբեկ եղած՝ կազ-
 դարարեն խոհեմ, զգոյշ և մեռած
 ձեւանալ, հակառակ պարագային
 թուրքիոյ մէջ յեղափոխական
 շարժում մը ընողը գաւաճան պի-
 տի հռչակուի եզեր:

Ի՞նչ տեսակ խմորէ կազմուած

է արդեօք այդ կարգ մը խմբա-
 գիր, թերթ շարագրող մարդոց
 ուղեղը, որ գեռ չեն ուզեր կամ
 չեն կրնար հասկնալ, որ մեր
 գլխուն եկած ու գալիք բոլոր
 շարիքին պատճառը և միակ
 պատճառը թուրքն է:

Ի՞նչու այսպիսի օրհասական
 վայրկեաններուն մէջ, երբ պէտք
 ունինք ամէն խնդիր, քէն ու
 պայքար մոռնալով իրարու մօտ
 սեղմուելու և գարմանի միջոց
 մը խորհելու, ելլենք ու կանու-
 խէն նոր եղբայրասպան պատե-
 րազմի մը պատրաստուինք:

Դեռ պիտի շարունակենք ա-
 բուս պէս փայլող ճշմարտու-
 թիւններու դէմ աչք գոցել:

Դեռ պիտի շարունակենք
 անձնական տափակ հաշիւներու
 մէջ ազգի, հայրենիքի շահը
 խղդիլ:

Դեռ պիտի շարունակենք մեր
 բացասական ուղղութեամբ ժողո-
 վուրդը իր ցաւերուն անգիտակ
 պահել:

Դեռ պիտի շարունակենք կո-
 կորդիլոսի արդունքներով մեր
 անտարբերութիւնը պարտիւլ և
 ժողովուրդը օրորել:

Դեռ շարունակենք կըսեմ՝
 թուրքին փափաքած ու մեր ալ
 հետեւած այս ազգակործան ըն-
 թացքը:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՈԼԻՍ, 4 Օգոստոս

Վերջին 4—5 օրս ջղային ան-
 համբերութեամբ կը սպասէի Բա-
 շէշէն գալիք տեղեկագրին:

Վերջապէս հասաւ:

Չիլիկիտեան վարդապետը կը
 գրէ որ Ալի փաշան Դ. զօրաբա-
 նակի քանի մը հազար զօրքերով
 և համառական բազմաթիւ քիւր-
 տերով կերթայ Սպաղանք գիւղը
 «իբր թէ յեղափոխականներ»
 գտնելու: Գիւղացիք կըսեն որ
 հոն ատանկ անձեր չիկան և չեն
 ալ եղած: Ալի կը հրամայէ իս-
 կոյն յարձակիլ եկեղեցիին վրայ

և այրել: Հոն 18 հոգի քահանա-
 յին հետ մոխիր կը դառնան,
 ետքէն կրակ ընել կուտայ գիւ-
 ղին քանի մը կէտերէ և ամ-
 բողջ գիւղը մոխրի մը կոյտ կը
 դարձնէ: Սպաղանքի 200 տուն
 զուտ հոյ բնակիչներէն 600ի չափ
 կը կոտորուին, իսկ մնացեալները
 սարեր ու ցորեր փախչելով՝ կա-
 զատուին: Մօտակա քանի մը
 հայ գիւղեր ալ կոտորուածի մատ-
 նելէն ետքը՝ Ալի յալթանակով
 կը դառնայ Բաղէշ:

Աս է Չիլիկիտեանի տեղեկա-
 կագիրը: Վարդապետը կաւելցնէ
 որ ինքը գեռ ևս չէ գացեր ոճրի
 վայրը, բայց իր թիւերը քաղեր
 է էն վստահելի և տեղեկակ աղ-
 բիւրներէն:

Ինչպէս արդէն գրած եմ նա-
 խընթաց նամակովս՝ Ալի փաշայի
 տեղեկագիրը կըսէ որ «հայերը
 զէնքով դիմադրեցին, զինուած
 յեղափոխականներ կային եկեղե-
 ցիին մէջը ապաստանած: Մենք
 ալ զէնքով ստիպեցինք հպատա-
 կիլ, մեղմէ 7 զինուոր ինկաւ,
 հայերէն 12—18 հոգի միայն»:

Իսկ գեսպաններուն եկած հե-
 ազրի մասին արդէն գրած եմ
 անցեալովս:

Ի հարկէ Բ. Դուռը, աղէկ գիտ-
 նալով որ գեսպանները արդէն
 ճշմարտութեան աւելի մօտիկ
 լուրեր առած կըլլան իրենց հիւ-
 պաստաններէն՝ իսկոյն փութաց
 Ալիի կեղծ ու պատիւ «աբօռ»ը
 անոնց հազորդել:

Եւ ահա վրայ հասաւ հայ ա-
 ռաջնորդի տեղեկագիրը: Օր-
 մանեան կառնէ կը կարգայ և...
 գոմէշի կաշի է քաշեր այդ մար-
 դը իր երեսին... թախիծի.
 խղճահարութեան, կսկիծի գիծ
 մը անգամ չի արտայայտեր ու
 կը խնդայ... Ծուրջը եղած քա-
 նի մը սրտացաւ անձեր կը հար-
 ցնեն, թէ ի՞նչ պիտի ընէ, «հիշ»
 կը պատասխանէ այդ հրէջը ըն-
 նական անփութութիւնով մը:

պատրիարքի մը էն առաջին պարտքն է :

Գրած է ի որ կիրիկիոյ կաթողիկոսութեան «ընտրելեաց ցանկ» մը տալուն համար ժողով մը եղաւ և համաձայնութեան չեկան : Խառն ժողովի տարւ աշխարհական անդամները ցանկ մը տալու կողմն էին , իսկ վեց հոգեւորականները բացարձակ դէմ էին : Արդէն ըսած եմ որ Արդարութեան նախարարութեան գըրուած էր պատրիարքարանի կողմէն որ «թէեւ ժողովի անգամներու մեծամասնութիւնը ցանկ մը ներկայացնելու կողմն է , բայց վերջնական համաձայնութիւն մը չի կայանալուն պատճառով կը խնդրենք որ թոյլատրէք կատարել ընտրութիւնը ըստ առաջնոյն » :

Այժմ «Առաջին» (Արդարութեան նախարար) խիստ քաղաքավար ձեւով գրուած արժանատի պատասխան մըն է եկեր այն պառնջ գրութեան , որուն մէջ ամբողջ ժողով մը թէեւ «ձայնբու մեծամասնութիւնով մը (10ը ընդէմ 6ի) համաձայն է ցանկ մը ներկայացնելու , բայց վերջնական համաձայնութիւն չը գոյանալը կը յայտնէ . . .

Եթէ ես ըլլայի այդ թուղթին պատասխանողը , կըսէի իսկոյն որ ատ ժողովը «անարդիւտական» համախմբում մըն է . որովհետեւ 10 հոգիի ձայն չի կրնար վճիռ մը կայացնել ընդդէմ 6ի . . .

Արդարութեան նախարարը գրած է .

«Աւրախութեամբ առինք ձեր վերջին գիրը և հաճոյքով կարգացրինք որ մեծամասնութիւնը ցանկ մը տալու համաձայն է , բայց փոքրամասնութիւնը դէմ

է : Կը խնդրենք որ նորէն ժողով ընէք և վերջնական համաձայնութեան գաբ ցանկ մը տալու համար » :

Աս պատին աս ձեփն ալ բաւ է : Աս թուղթը հաշիւ արժէ աս պատասխանը :

Այսօր , ուրբաթ , Խառն ժողովի նիստ է նշանակուած ատ խնդրին համար : Զի յուսացուիր որ կրօնաւոր անդամները գան , որովհետեւ ամէնքն ալ (6 հոգի) դէմ են ցանկ ներկայացնելու , որով և ժողովը հաւանորէն պիտի չի կայանայ ու կիրիկիոյ հոգեմաշ խնդիրը քանի մը ամիսներ ու թեթեւ քանի մը տարիներ ալ քաշքշուի :

Այն ինչ կաթողիկոսները Սոսի անտէր վիճակներուն մէջ նոր գպրոցներ կը բանան , նոր եկեղեցիներ կը հիմնեն , նոր հետեւողներ կորսան , հոգիներու առուծախը կ'աճեցնեն . . .

Թուականէս 2—3 օր առաջ Համիա Երջուրի պարտէլին մէջ պտոյտի ելած պահուն յանկարծ մարդու մը կը հանդիպի : Այդ անձը թուրք մըն է եղեր : Ո՞վ է . ինչպէ՞ս և ինչո՞ւ . մտած է պալատի պարտէլը — ոչ ոք գիտէ : Մարդը անմիջապէս կը զրկուի անդիւր շխարհը «ի գոգն Առնաւորտի» . . . կենթադրուի , որ մտած է եղեր պարտէլը ուսումնասիրելու որոշ նպատակով մը . բայց յանարծ Համիային հանդիպեր է . . .

Չճամեակի առթիւ ներկայացուելիք հայկական ուղերձը կը գրուի . . . Ի տ քիչ էր կարծես , այժմ ալ կ'իմանամ որ Բարդուղի մէտու ու Մեսրոպ դաւաճան ե .

պիսկոպոսներն ալ մէյմէկ նոր ուղերձ կը պատրաստեն իրենց կողմէ ներկայացնելու համար :

ԲԱԺ

ՄԱՍՈՒԼԻ ԾՈՒՂԸ

Կը յարգեմ վիճենայի Միսիթարեան Հայրերը՝ կը հիանամ Հայր Տաշեանի գրական գործունէութեանը վրայ . որ կուսուծի ասիքէ , կը հետազօտէ . կը քննադատէ եւ կը թարգմանէ հայ հին մասնագրութեան վերաբերեալ ամէն գործ ու խնդիր , եւ մինակը գրէթէ կը լեցնէ Համիոյ Անտրուայի լայն էջերը :

Բայց կը սիրեմ վենետիկի Միսիթարեան Հայրերը , սասնց դէմքին վրայ գիտունի ցուրտ խորհրդող պատկանունքն տարբերան մը կայ . բանաստեղծայն անուշիկ հով մը , հայասեր ու հայրենասէր շունչ մը , որ զիրենք միշտ տաք ու պիտի կը պահէ ազգին հետ :

Մասնագիտական սեփականով Բագմալիկ շունի Հանդիսի գիտական բարձրութիւնը . բայց անի աւելի այլապէս եւ աւելի հետաքրքիր է : Վենետիկի Հայրերի իտալական քիչ իրկիւնքին , Միջերկրականի գեղազուարճ ամբիւր . ներշնչումով գիտեն մասնագրական ուսումնասիրութեան մը մօտ գիտելի ազգային տեղագրական նախուն էջ մը եւ աշխատած հետազոտութեան մը քով , այնպէս որ անորայլապէս թեմանրմէջ շատ անգամ կը մոռնաս բանաստեղծական տողերու երբեմնակի թուրքութիւնը . եւ կանտեսես միամիտօրէն գրուած խմբագրական պատասխանները :

Վենետիկի Հայրերը սակայն միայն Բագմալիկով չեն գոհանար . անոնց մշտաշարժ մամուլը միշտ կը գործէ , եւ ինչպէս անցեալին՝ նմանապէս ներկային մէջն ալ վենետիկցիներն են միայն , որ կարտագրին հայ մտքի եւ հայ մամուլի արգիւնք հրաշակերտները :

Մերունազարդ Հայր Ալիշանէն ետքը՝ Հ. Ս. Էփրեկեանն է որ կը շա-

րուենակէ վենետիկցիներու հայկական տեղագրութեան շարքը :

Այսօր այժիս առջև ունիմ Բնաշխարհիկ Պատկերագրի Բառասանին երկրորդ պրակը . հոյակապ գործ մը , օգտաշատ ձեռնարկ մը որ եթէ վերջանայ՝ Միսիթարեանց գործունէութեան՝ զարգացման կամ զարամտար լուսապահը պիտի ըլլայ :

Նպատակս այդ հրատարակուած երկու պրակներուն վրայ քննադատական մը գրել չէ . կը խոստովանուիմ համեստ կարողութիւններս : Եւ արդէն այս բառարան իր պարունակութեամբ , իր պատկերներով , իր բազմակողմանի օգտակարութեամբ սքանչացում միայն կը ներշնչէ :

Ու ինչպէս չի յիշեմ հոս Անանիոսի խմբագրականին կողմէ եղած այն կոչը որ կատարի յարձակութեամբ (Չօպանեանի սովորական ձեւը երբ մանաւանդ կուսակցական է) վենետիկի Հայրերուն վրայ , որ ծայրայեղօրէն անխաւ կը մոռնար յիշատակութիւնը ընել այս գործին , որ սկսուած էր արդէն :

Թեթեւ առարկուի եւ կամ իմ հիտցում ու գովեստ քիչ մը չափազանցուած նկատուի թերով թէ ի՞նչ կ'ըլլայ , ազգին անդիւն սեղեկութիւններ քաղել , գրքեր պրկուիլ , պատկերներ ժողովել , իրար բերել , ի՞նչ հանձարի կամ տաղանդի գործ է ազ :

Ազգի , բայց յամառ գործունէութիւններ կան , որոնք իրենց պահանջով յարատեւ աշխատութեամբ եւ սուած օգուտներովը՝ առջեւնին կը խոնարհեցնեն հանձարներն ու տաղանդները :

Անա ստոնցմէ է նաեւ Հ. Էփրեկեանի գործունէութիւնն ալ :

ԵՐՈՒԱԶ

Յ. Կ. ԲԱՍՄԱՍԻԱՆ

Բանասէր

Այս եռամսեայ հանդէսին Բ հատորի Ա պրակը հրատարակուած է : Բանասէրի տարեկան գինն է 20 ֆրանք . մէկ կրթքը 6 ֆրանք :

Հասցէ՝

Basmadjian

112 Bd Rochecouart-Paris

—) (—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵԹՈՏ ԵՒ ՀՆԱՐՔ

Մօտա է . սկսած մէտոդիկական կրթութիւն մը հազիւ ստացած իմաստակէն՝ որ բանի մը դեղ չըլլալուն համար՝ գեղեցիկ օր մը ուսուցիչ կը կարգուի , մինչեւ հին աւանդականութեանց մէջ բրածոյ դարձած պատուելին այսօր մանկավարժ է Երբ ամէն արեւատ անհրաժեշտ հըմտութիւն մը ու վարժութիւն կը պահանջէ , երբ ո՛չ ոք առանց վարպետի կամ աշխատած ըլլալու , ատաղձագործ քով կ'օշկակար ըլլալը կը յաւակնի , չը գիտեմ ի՞նչ թեթեւամտութեամբ մեր մէջ առտուն կանուխ արթնցողը կրնայ մանկավարժ եւ ուսուցիչ ըլլալ : Առանց հիմնական կրթութիւն մը ստացած , կանոնաւոր վարժարան մը տեսած ըլլալու . երկու պրօչիւրի ընթերցումով ու ասկէ անկէ լսածներով ամէն մարդ այսօր անվիճելի եւ հեղինակաւոր մանկավարժ կը

դառնայ , ի՞նչ է այս վնասակար երեւոյթին պատճառը . արդեօք մասնակները կրթելու եւ դատարարակելու գործը չափազանց բարդ եւ չափազանց պատասխանատու արուեստ մը եւ գիտութիւն մը ըլլալուն համար է , որ այնքան թեթեւամտութիւն ցոյց կը տրուի , թէ դեռ ճշմարիտ մանկավարժներ չունեցած՝ մեր մէջ մանկավարժութիւնը վարկարեկելու գիտաւորութեամբ է որ այդ ազնիւ արհեստին վիճած ներկայացուցիչները ի յայտ կուգան :

Մօտա է սակայն այսօր ամէն մարդ կը գրէ ու կը խօսի կրթական խնդիրներու մասին , բայց մանաւանդ վարժապետները , մանուկները կրթելու խիստ դժուար եւ պատասխանատու պարտօնը սասանող անձերն են որ ամէն տեղ իրենց անվիճելի եւ յաճախ չունեցած մեթոտունուն վրայ կը ճառեն : Մեր մէջ ուսուցիչ ընտրելու եւ պահելու յոռի եւ զանազան շնորհիւ , ամէն մարդ գիտէ թէ այդ փափուկ պաշտօնը շատ անգամ ապիկարներու , մտաւորապէս ու բարոյապէս սնանկ արարածներու կը յանձնուի . եւ ձեռք առարկէ չին այդ անարժան անձնաւորութիւններն են

որ քիչ անգամ հրապարակաւ՝ բայց միշտ անկիւնները , մտքին մէջ , ժողովրդի աչքին փոշի փչելու նպատակաւ՝ կը խօսին մանաւանդ իրենց մանկավարժական մեթոտներուն վրայ , առանց քիչ մը հասկացողութիւն ունենալու այդ մասին եւ խեղճերը տեսած եմ , որ շատ անգամ մեթոտը հնարքին (procédé) հետ չփոթելու ծիծաղելի թերութեան մէջ կ'ընան : Ամենէն լաւը կ'օշկակէն վեր չըլլին է : «Որմնագիր եղէք եթէ արհեստիք այդ է» կըսէ Յրա՛ստկաւ : ստած մը , բայց երբ ուսուցիչ էք՝ ներելի չէ որ մեթոտը հնարքին հետ չփոթելու չափ տգէտ ըլլաք :

Այս առիթու մասնաւոր տիպարի վարժապետներու համար է որոնց դժբաղդարար ամէն տեղ կը հանդիպինք . — Ես կարճամտեմ քեթերինն ամէն բանի մէջ խոթող եւ ամէն բանի առհասարակ քննադատ հանդիսացող գրչակները . թաք են նպատակներով մեր կրթական վիճակին վրայ կողորդիլու արցունք թափող կամաւոր կոյր եւ ինքնակոչ քննադատներն ալ այսպանելի կը գրտնում . բայց իրիւ ուսուցիչ մեր թեթութիւնները մատնանիլ ընելէ , մեր

մէջ գտնուած տպիկարները պատարակելէ ըստ չեմ քաշուիր : Դժգոհ ըլլալ առանց պատճառի , կամ առանց պատճառները յայտնելու , երեմիական ողորկ կարողութեան քննադատել չէ : Յարգելի պաշտօնակիցս Վ . Մասնուէլեան ուրեմն շատ իրաւունք ունէր երբ քոնի մը օր առաջ այդ կապի քննադատները կը ձողկէր : Երբ բայց որդար քննադատներ եղէք եւ ձեր ըսածները թող հիմնաւոր ու փաստացի ըլլան , այն ժամանակ միայն օգուտ մը կրնաք յառաջ բերել :

Տեսականին մէջ պարզ եւ դիւրին բան մը ըլլալ կը թւի մեթոտը հնարքին զա՛ւազանելը , բայց գործնականին մէջ այնպէս չէ . մեր ուսուցիչներէն շատերը , նոյնիսկ պմենէն մեթոտիկ կարծեաւորներն երբեմն շարժար կը սխալին այդ մասին , Շարժական ստուերով դրերը ճանչնելը , թեւեւ սոց գործիքի , աշխարհագրութեան քարտէսներու , գրատախտակի կիրառութիւնը , պարտականութեանց սրբապուճը ընդհանուրով կամ ա-

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ՊՈՒԼԿԱՐԻՍ. ԵՒ ՌՈՒՄՆԱՆԻԱ

Վերջերս Ռուսական մամուլը անպատկառ նախատինքներու ու հայհոյանքներու ուժգին արշաւանք մը սկսած է Պուլկար կառավարութեան և ազգին դէմ:

Ռուսական «Բէնիստուլա-Պարտիքա» թերթի խմբագիր ուսուցիչ Միխայլեանուի անձին դէմ գործուած ոճիրը գրեթէ բազմապատահար մըն է. անչափահաս պատանի մը, Սթոեան Տիմիթրով, նոյն թերթի խմբագրի կողմէ Պուլկար Մակեդոնական գաղթականութեան կրած նախատինքներուն ու անարգանքներուն վրէժխնդիր հանգիստանալու համար՝ կսպաննէ այդ խմբագիրը:

Ռուսական քրէական օրէնքները շատ դիւրութեամբ կրնան իրենց հաշիւը տեսնել անհատի մը հետ, ուրեմն գ.տ.ապարտելի արարքը երբեք չի կրնար անուանարկել գործողին պատկանած հասարակութիւնը: Ռուսական կառավարութիւնը միայն անձի մը հետ գործ պէտք է ունենաք և ոչ թէ ամբողջ ազգի մը հետ: Եթէ պատրուակ է հայհոյել ազգ մը, որ ոչինչով է մեղաւոր ու պատասխանատու ինչպէս միջազ-

գային օրէնքներու ու հանրային կարծիքի առաջ — պատանիի մը անխելք գործերուն, նոյնչափ անհիմն են այն ժողովրդական մարմաները, որուն արձագանգ կուտայ Պուլկարի Պուլկարական մամուլը, գրգռելով երկու ժողովուրդներու ցեղական ինքնատիրութիւնները ու արժանապատուութիւնը:

Բայց այս վայրագ զայրոյթի բորբոքման բուն շարժառիթներն ի՞նչ են. եթէ պրպտենք — պիտի գտնանք քաղաքական ու տնտեսական լայն բնոյթ ունեցող խնդիրներու մէջ, որոնք աւելի Մակեդոնական հարցի շուրջն են: Ռուսան կառավարութիւնը քանիցս ուղիմտութեամբ տուած է Պուլկար կառավարութեան, անոր ուշադրութիւնը հրաւիրելով Պուլկարի մէջ հաստատուած մակեդոնական գաղտնի ընկերութիւններու գործունէութիւնը պրպտելու, սեղմում գնելու մակեդոնական այն ազատ շարժումներուն, որոնք զուտ յիպոփոխական գոյն կրելով, կրնան ապագային Պալքանեան երկրներու — Սթամբուլի — գիւտ խնդարել, սակայն Պուլկար կառավարութիւնը իր գրացիի բողոքներուն բաւարարութիւն տալու տրամագրութիւն ցոյց չէ տուած, որովհետեւ մակեդոնական հարցը իր անկասկածեան ու ազգային իտէալներուն հետ կապուած ըլլալով՝ կրնար երկրի մէջ ներքին գոգոհութիւններու առիթ տալ, հո՞ծ ու սուր կերպով արտայայտուած:

Ռուսան կառավարութիւնը ոչ միայն Ռուսանիոյ և Տօպրոճայի մէջ սկսեց ճնշել ու հալածել պուլկար տարրը, այլ նոյնիսկ ձեռնարկեց բուն Մակեդոնիոյ մէջ «գրգռիչ» քաղաքականութեան դեր խաղալ, վայելելով

թրքական իշխանութիւններու հովանաւորութիւնը, սերպերու ու յոյներու հետ միացած սկսեց ճնշել, ամէն անաչնի միջոցներու դիմելով պուլկար տարրի կուլտուրական ճամբան գոցել, բայց իր ջանքերը միշտ ամուլ հետեւանքներ տալու գաւառապատեցան շնորհիւ մակեդոնական կոմիտէի ընդդիմադրութեան:

Մակեդոնական ժիր ու եռուն գործունէութիւնը, Ռուսական շատ մը քաղաքական ծրագրիները խաթարելու ու պատնիշելու նպատեց: Մակեդոնիոյ մէջ բնակող շնչին ումէն (ցինցար) տարրը ինքնիրեն կը շեղուքանար և կամ պուլկար տարրին հետ ձուլման կենթարկուեր: Միւս կողմէն ալ մակեդոնական կոմիտէի վայելած ահագին ժողովրդականութիւնը ու վստահութիւնը փորձանք մը եղած էր խելճ ուսումնացիներու գլխին, որոնք Մակեդոնիայի տիրելու երազներուն անիրական ըլլալուն համար մը կը մընէին:

Ազգային կոշտ մտաւորական հպարտութիւնը նպատեցաւ պիտի գրգռէր Պուլկարի մամուլը, որ շուշացաւ իր անվայել յարձակումները ընել նախ մակեդոնական կոմիտէի զեկավարներուն, յետոյ ալ Պուլկար ազգին «Ունիվերսալ» «Բէնիստուլա-Պալքանի» և «Ազգիբուլղարի» երբ լեցուցան հայհոյանքով ու լուտանքով նոյն կոմիտէի նախագահ Պ. Սարաֆովի անձին դէմ, զայն իբր «գլխաւոր հեղինակ» յայտարարելով այդ ոպանութեան: Ռուսական մամուլի շանթածները, ամէն համեստութիւն ոտնակոխ ընելով սկսան ազգային պատուին ալ լուտանքներ թափել, որը յուզեց ամբողջ պուլկարական մամուլը, առանց կուսակցական խտրութեան

միացան երբ տեսան որ ազգային գրօշը նախատելու յանդգնութիւնը կուենայ իրենց կոշտ գրացին:

Ռուսական կառավարութիւնը իր բողոքագրին զօրաւոր արձագանգ տալու համար, դիմած է երբեակ Իաշնակցութեան պաշտպանութեան, և կը սպառնայ խղել ամէն յարաբերութիւն, եթէ չի սանձուին այդ վնասակար ընկերութեանց գործունէութիւնը: Ուրիշ պետութիւններու օգնութեան դիմելը շատ պարզ կերպով ցոյց կուտայ՝ թէ ո՞րչափ տկար ու խախտու է Պալքանեան թերակղզիի մէջ, Ռուսանիայի դիրքը և եթէ իր վրէժուն սպառնալիքը որ մը պատերազմի գաշտին վրայ կարգադրուելու մնայ, մենք կը ճանշնանք այդ «մամալիկա» ուտողները...:

Բայց սա ալ գիտնան՝ թէ Պուլկարիա իր ազատարարի հետ շատոնց է որ ջնջած է ամէն անախորժութիւն, այնպէս որ ինքը Պալքանի ի վանի գրպանի մէջ շընչարգելութեան վտանգին չենթարկուելու միջոցները թող խորհի:

ԹՂԹԱԿԻՑ
Սօֆիա, 4 Օգոստոս

Շ Ա Ւ Ի Ղ

Շաւիղի 11րդ թիւը այսօր հրապարակ կելլէ հետեւեալ բովանդակութեամբ.

«Սասուն», Երուանդ Սրբաբէշխանեան. — «Վարձատրել և պատժել գիտնանք», Վահան Շահրիման. — «Գիտական արձագանգ» (Ախլը), Յ. Ս. Փափազեան. — «Ճիւղիկի հայ գաղութին ծագումը», Վահան Մանուէլեան. — «Տամա-Մահմադ փոշայի բողոքը», — «Յնօրք», Երուանդ.

ուանին, շարագրութեան նիւթի մը յատակագիծը, բնական գիտութեանց փորձերը և այլն շատ շատերէն իրրու մեթոտ կը համարուին, մինչդեռ պարզ միջոցներ կ'ամ հնարքներ են միայն: Մեթոտը այն գիտակից, և մտածուած ուղղութիւնն է որուն կը հետեւի միտքը ճշմարտութիւնները և բնական օրէնքները գտնելու կամ զանոնք արտայայտելու, բացատրելու համար: Իսկ հնարքները այն գործնական միջոցներն են զորս մարդ վարպետօրէն և մասնաւոր ուղղութեան մը մեթոտի մը համեմատ ի գործ կը գնէ նպատակին հասնելու համար: Երեւոյթները ցուցնելով ահուցմէ հետեւին օրինքը՝ մեթոտ մըն է, օրէնքը արտայայտել յետոյ զայն երեւոյթներու վրայ կամ օրինակներով հաստատուն ալ ուրիշ մեթոտ մըն է, բայց երեւոյթներ յառաջանելու համար հնարուած հազարաւոր փորձերը, աշակերտներուն տրուած հրահանգները, բան մը հակցնելու համար ստեղծուած բոլոր առիթները միջոցներ կամ հնարքներ են միայն: Ուսուցիչ մը ազուր միտքը զարգացնելու և հոգին ազնուացնելու համար միայն մէկ տեսակ համոզում,

ըմբռնում և հետեւարար մէկ մեթոտ կամ ուղղութիւն կրնայ ունենալ, բայց այդ մեթոտով իր նպատակին հասնելու համար կրնայ տղուն բնութեան, հակումներուն, տարիքին և առնուգում առարկայի տեսակին համեմատ ստեղծել և գործածել այլազան և բազմաթիւ հնարքներ: Մեթոտը առանց հնարքի և հնարքներն ալ առանց մեթոտի հաւասարապէս ապարդիւն են, բայց և այնպէս նախապատուութիւնը միշտ մեթոտին տալու է որովհետեւ անով է որ հնարքները իմաստ մը կուենան, արժէք մը կը ստանան: Արդարեւ գործիքներն են անոնք զորս որոշ ուղղութեամբ մը և խելայի կերպով գործածելով միայն կրնանք օգուտ մը ստանալ: Հնարք առանց մեթոտի, առանց ուղղութեան արժէք չունի, ստուր համար է որ այն ալ յարաբերուի, որով աշակերտներուն կարգաւ սորվեցնող պատուելի մը երբ կուպկորէն շարժական տառերու գործածութիւնը ընդօրինակէ, չը կրնար արդիւնք մը ստանալ մինչդեռ որ մեթոտին խելամուտ ըլլայ:

Երբ մենք ուսուցիչ չենք, երբ ըրածնուս ու ընելիքնուս գիտակցու-

թիւնը չունինք, ուրիշներէ փոխ առնուած, ընդօրինակուած միջոցներով ո՛չ կրնանք աշակերտներուն կարգապահութիւն և ոչ ալ ուսում սորվեցնել: Ի տոր շատ փորձերը տեսած եմ, ունեցած եմ պաշտօնակիցներ որոնք գորգաղբարար մտքերուն իսկ չեն անցուցած ուսուցիչ ըլլալ, բայց լարիզ գործ ալ չի կրնալով ընել վարձապետ եղած են, այն պարզ պատճառով, որ մեր մէջ ընդհանուր համոզում գարձած է թէ հայ ուսուցիչք գործն է ուսուցչութիւնը, արհեստներուն մէջ միայն այդ է որ իր չափազանց դժուար և չափազանց պատասխանատու ըլլալուն համար պէտքէ մասնաւոր պատրաստութեան պէտք չունի, մարդ կրնայ վարձապետութիւն ընել, բաւական է որ քիչ մը դպրոցի երես տեսած ըլլայ, բայց այդ խելճերը տարելընան բոլորած են, ամէն ճիգ թափելով կապկորէն ընդօրինակելով և իբրև թէ գործածելով ամէն հնարք, չեն յաջողած նոյնիսկ իրենց դասարանի բարելոնական խառնակութիւնը քիչ մը մեղմելու:

Ինչ որ են գործիքները արհեստա-

ւորին՝ նոյնն են հնարքները մանկավարժին համար, և ինչպէս որ մարդ առանց կոչկակար ըլլալու չը կրնար նոյնիսկ ամենէն կատարեալ գործիքներով կօշիկ մը չիտել, նոյնպէս ալ մէկը երբ ուսուցիչ, մանկավարժ չէ, երբ հասկացողութիւն, գաղափար չոնի տղուն մտաւոր ու հոգեկան կարողութեանց զարգացման օրէնքներուն վրայ, չը կրնար ամենէն աւելի ազդեցիկ համարուած հնարքներով իսկ արդիւնք մը ստանալ, երբ մասնաւոր մանկավարժական հնարքները ո՛ր և է արհեստաւորի ամենէն փափուկ գործիքներէն աւելի խնամոտ և խելացի գործածութիւն մը կը պահանջեն:

Երբ կըսենք թէ նախապատուութիւնը մեթոտին տալու է, հնարքները անտեսելու չէ, որովհետեւ անոնցմով է որ մեթոտը կիրակնանայ, մարմին կառնէ, ի գո՛ւր տղուն բնութիւնը ճանչցած, անոր մտաւոր ու հոգեկան կարողութեանց զարգացման օրէնքներուն վրայ մտածած և գործունէութեան խթանները փնտրած պիտի ըլլանք, երբ չը գիտենք թէ մեր ստացած այդ ճանութեան ինչ միջոցներով կըր-

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հանգուցեալ աշխարհահռչակ ծովանկարիչ Այվազովսքի 50,000 բուպլի կտակեր է, իր ծննդավայրը եղով Թէոտոսիայի Ս. Սարգիս եկեղեցւոյն: Այդ գումարը հնչուն գրամ չէ, այլ մէկ քանի այգիներ:

Վանայ այցելու հովիւ հերսէս եպիսկոպոս յուրիս 24ին մեկնեց և Վանէն, և ուղեւորեր է Աւանց գիւղը, ուրկէ պիտի երթայ Գատուան և հետզհետէ պիտի այցելէ Բաղէշ, Սուշ, Բիլի: Վանցիները շատ ցաւ զգացեր են անոր մեկնելուն համար. և կըսեն թէ ոչ ոք պիտի կրնայ գոցել անոր պակասը:

Վեհ. Հայրապետը երկու վարդապետներու ընկերակցութեամբ Հաղարծինէն հասեր է Մեծ Գարաֆիլիսէ, ուրկէ պիտի վերադառնայ Էջմիածին:

Կաթողիկոսական տեղապահ Արիստակէս արքեպիսկոպոս ծանրապէս հիւանդացեր է:

Ջանչեանի թաղումը կատարուեր է Մոսկուայի մէջ մեծ հանգիստաւորութեամբ: Հարիւրէ աւելի պատկերներ տակ ծածկուեր է գերեզմանը:

Հայերէն, Ռուսերէն շատ մը դամբանականներ կարգացուեր են:

Սուրհանդակէն կրմանանք որ Սօֆիայի Արիստակէս քահանան կրկնամուսնութիւն մը կատարած ըլլալուն հրաժարեցուցուեր է իր պաշտօնէն:

«Բիւրակն» շաբաթաթերթը տպագրական տեսչութեան կողմէ անպայման կերպով դադարման դատապարտուեր է:

—)(—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Բ Ւ Ա

Կայսերական իրատէի մը համաձայն Պօլիս Գատական պաշտօնատան մէջ յանձնաժողով մը կազմուեր է, որ պաշտօն պիտի ունենայ Եւրոպա փախչող թուրք պաշտօնեաներէն ետ դառնալու զողներուն հետ բանակցելու, իսկ մնացողներուն համար որոշելու օրինակներ պատիժը:

Էրզրումէն Պօլիս թուրք թերթի մը քաջած հեռագիր մը կըսէ թէ Սիլա Մահմէտի կողմէրը կայսերական զօրաց շնորհատ մը 5 աւաղակներէ բաղկացնալ խումարի մը հանդիպելով յաջողեր է զանոնք ձերբակալել և Էրզրում բերել:

Պուլկարիոյ Օսմ. հպատակները հանգանակութեան մը ըսկըսած են որուն արդիւնքով ոսկիէ և արծաթէ ձուլուած գեղարուեստական մանրանկար բնակարան մը կը պատրաստեն:

Ասոր շորս կողմը արձանագրուած պիտի ըլլան Սուլթանի գահակալութենէն ի վեր կատարուած բոլոր յառաջդիմութիւնները թուրքիոյ մէջ:

Հապա յետագիւրծութիւնները և արիւնյախոյնութիւնները ուր պիտի արձանագրուին:

Գուրը մերժեր է անգլիական զեսպանին առաջարկը, որ է Սասուն մասնաւոր քննիչ յանձնախումբ մը զրկել. և ըսեր է թէ տեղւոյն հիւպատոսները կրնան այդ գործը կատարել:

Տարտանէլի աւշեւ գտնուող Օսմ. 8 զրահաւորները սկսած են ածուխ մթերել ձենովա երթալու համար:

Այս լուրը հաղորդող թուրք թերթերը չեն ըսեր թէ ինչ ընելու պիտի երթան հոն:

մարդն ըլլանք, պէտք է մեր ընդունած միջոցը իրագործել գիտնանք:

Այդ պատճառաւ ահա ուսուցիչ մը ետ ինկած երկրի մը մէկ գաւառին խորը. անկերպարան վարժարանի մը մէջ տեսած նախնական. պատուելիական միջոցներով մնալու չէ, այլ արհեստի կատարելագործութիւնէն վարպետ ուսուցիչներու փորձառութենէն օգտուելու է միշտ: Ամէն դարու քայց մանաւանդ ներկայիս մէջ ապրող քաղաքակիրթ ազգերու կրթական սխալմիտներէն և նշանաւոր մանկավարժու. ուղիներու փորձառութենէն օգտուելու անոնց գործածած մեթոտներն ու հնարքները իրացնելով գործածելը անշուշտ մանկավարժութեան արհեստական, քայց գործնական և արդիւնաւոր մասն է, և արդէն տեսական կամ գիտական մասը առանց գործնականին չեղեալ կը համարուի: Ամէն գործի և արհեստի, քայց մանաւանդ մանկավարժութեան մէջ մեծ իմաստութիւնը վարպետութիւնը տեսականը գործնականին հետ հաշտեցնելն է. կամ աւելի ճիշդը գործնականով տեսականը արդիւնաւոր ընծայելն է: Արհեստները իրենց զարգացումը գիտուններու տեսու-

Միջերկրականի անգլիական նաւատորմին հրամանատար ծովակալ Ֆիշըր օգոստոսի վերջը պաշտօնապէս պիտի այցելէ Սուլթանին: Սուլթանին քսանըհինգամեայ տարեգարձին մերձեցման պատճառաւ, ոստիկանութիւնը բազմաթիւ անգործ հայեր ձերբակալելով հայրենիքին զրկեր է:

Ելմտական նախարարը բանակցութեան մտեր է Օսմ. Պանքային հետ՝ 700,000 օսմ. ոսկոյ կանխավճարի մը համար, որուն մէկ մասը յատկացուած է նաւային սպասարկութեանց թերհաշիւներու վճարման: Պանքան արդէն հաւաներ է 90,000 ոսկիի կանխավճար մը ընելու, մէկ ամսական վճարուելու համար պետական պաշտօնեաներու, Սուլթանին զահակալութեան քսանըհինգամեայ յորելեանին առթիւ:

Չ Ր Ն Ա Ս Ս Ա Ն

Պօքսէրները և սնչուշտ շինացի կանոնաւոր զօրքերն ալ Բէքիւնի մէջ ինքզինքնին կը պաշտպանեն յուսահատութիւն: Գաղաքը կայրի. իսկ յայտնի չէ թէ կայսրուհին խոյս առած է թէ ոչ: Այս մասին հակառակած զրոյցներ կը շրջին: Կըսուի նոս. թէ ճարտական հեծելազօրքը արձակուած է կայսրուհիին ետեւէն որ կը փախչի 30,000 զինեալ մարդերով:

Չինաստանի դաշնակից բանակին նորընտիր վերին հրամանատար Վալտէրզէ մարալախը մօտերս Գերմանիայէն ճամբայ պիտի ելլայ «Սաքսէն» շոգեանաւով, որուն հնոցպաններէն 32ը շինացի են:

«Էնտէրմանտան Պէլտ» կը ծանուցանէ թէ Ֆրանսայի ար-

տաքին գործոց նախարար Պ. Տէլքսէ եւրոպական տէրութեանց պիտի առաջարկէ՝ համաժողով մը գումարել Բարիզի մէջ, շինական խնդրին վերջնական կարգադրութեանը համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մեր վերջին թուով ծանուցինք թէ Պօէր զօրավար Տըվէթ գերի բռնուած է 4000 հոգիով. այս լուր սխալ է: Այդ հերոսը իր 7000 քաջերուն հետ կը շարունակէ խաղցնել անգլիական բանակը որ զինք կը հետապնդէ, և մինչեւ իսկ յանդգնութիւնը կուենայ առաջարկել Պատէն.Բուէլ զօրավարին որ անձնատուր ըլլալու ասիկա պարզապէս ժամանակ վատկելու համար հնարուած միջոց մըն է եղեր: Տըվէթ անգլիացիներուն քթին խնդալով կծիկը կը գնէ: Անգլիական մասուր արդէն իսկ առասպելական հերոս կ'որակէ այս համբաւն Պօէրը:

Հոռոմի պապը ծանրապէս հիւանդ է եղեր:

Ֆիլադելփոսի Էմիրին համար կըսուի թէ զինուորական պատրաստութիւններ կը տեսնէ ուսական սահմանադրուելու արշաւելու:

Վերջերս Պուքէշի մէջ ժողովրդական միթիւնկ մը գումարուեր է 30,000 անձերէ բաղկացած:

Միթիւնկը իր հաւանութիւնը յայտնեց է ուսման կառավարութեան բռնած ընթացքին, և բողոքեր է Պուլկար յեզափոխական գործունէութեան դէմ:

Печатница Хр. Н. Войниговъ—Варна.

նել, քայց որովհետեւ մօտ է հիւսյ, մանկավարժի հովեր ալ կանոնն եւ շառլաթանութեամբ կուզեն իրենց ապիկարութիւնը պարսկել: Չըխարուինք: Չունինք կառավարութիւն, չունինք կրթական գործին զեղը իր ձեռքը առած մարմին մը, որ մեր մանուկներու դաստիարակութեան գործը կամայականութեւն փրկէր եւ որոշ ուղղութեան մը վրայ դնէր, ուրիմի ժողովուրդին, մանաւանդ հասկացող երիտասարդութեան նուիրական պարտականութիւնն է հսկել եւ չի թողուլ որ իր վարժարանները չէնչն ներս անգոյն հոգով եւ սրտով փճացած արարածներ կարենան մըտնել եւ մեր մատաղ սերունդը խամբեցնել:

4. ՊԻՕՆԵԱՆ

Ֆիլիպէ, 5 Օգոստոս

—)(—

նանք մեր նպատակին հասնելու, տղան դաստիարակելու եւ կրթելու ծառայեցնել: Աշակերտները բարեկրթութեան վարժեցնել, գանսք օգտակար եւ տեսական կերպով աշխատեցնել, անոնցմէ յարգուելու եւ սիրուելու եւ առանց բոնի ուժի անոնց բան սորվեցնելը միայն թէրիւրի, մեթոտի գործ չէ, այլ արհեստի եւ հնարքներու: Մի՛ ըսէք թէ երբ մտաւորապէս զարգացած ենք, երբ այս կամ այն լեզուին կամ գիտութեան տեղեակ ենք, կրնանք առանց անպատեհութեան ուսուցիչ ըլլալ, կրնանք գասարան պահելու եւ բան սորվեցնելու գործնական միջոցները խելքով ալ գտնել եւ օգտակար հանդիսանալ: Արեւմտեան կառավարութիւնը նշանակութիւն չունեցող բան մըն է, կրթական սխալմիտներու ուսուցիչութիւնը աւելորդ աշխատութիւն մըն է: Արդիւնաւոր ուսուցիչ ըլլալու համար ոչ միայն պէտք է որ ուսեալ եւ զարգացած ըլլանք, ոչ միայն խանդ ու եռանդ և արհեստի սէրը պէտք է ունենանք եւ մեր ստանձնած պաշտօնին վեհութիւնը զգանք, այլ աս մեկէն առաջ պէտք է արհեստին